**Կարծիք**

Նարե Արմենի Հովհաննիսյանի «Դպրոց-ընտանիք համագործակցության իրականացումն ընդհանուր ներառականության պայմաններում» ԺԳ.00.01 «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին

Հետազոտության արդիականությունը պայմանավորված է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների բարենպաստ կենսագործունեություն ապահովելու անհրաժեշտությամբ: Նարե Հովհաննիսյանը փորձ է անում ստեղծել ընդհանուր ներառականության պայմաններում դպրոց-ընտանիք համագործակցության մոդել, և դա նրան հաջողվում է: Հետազոտության կարևոր հիմնախնդիր է դպրոց-ընտանիք համագործակցության վերաբերյալ ծնողների և մանկավարժների դիրքորոշման դրական փոփոխության հասնելը:

Ատենախոսության ներածությունում ատենախոսը ձևակերպում է ատենախոսության մեջ կիրառվող հիմնական հասկացությունները, հիմնավորում է հետազոտության արդիականությունը, սահմանում է հետազոտության նպատակը և խնդիրները: Հակիրճ և հստակ է ձևակերպված հետազոտության գիտական նորույթը, ինչպես նաև տեսական և գործնական նշանակությունը: Հետազոտության առաջադիր խնդիրներին համապատասխանող պաշտպանության ներկայացվող դրույթներ են առաջադրված:

Ատենախոսության առաջին՝ **«Կրթության կազմակերպատեսական հիմքերը համընդհանուր ներառականության պայմաններում»** գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին՝ **«Սահմանափակ հնարավորություններ ունեցող երեխաների վերաբերյալ հայեցակարգային մոտեցումները»** ենթագլխում ատենախոսը ներկայացնում է սահմանափակ հնարավորություններ ունեցող երեխաների հանդեպ համամարդկային մոտեցումների պատմությունը:

Երկրորդ՝ **«Համընդհանուր ներառականությունը և օրենսդրական հիմքերը»** ենթագլխում ատենախոսը ներկայացնում է ՀՀ «Կրթության մասին», «Հանրակրթության մասին», «Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» օրենքները, կրթության առանձնահատուկ

պայմանների կարիքի գնահատման գործընթացը: Ատենախոսն առանցքային հիմանխնդիր է համարում սահմանափակ հնարավորություններով երեխաների իրավունքների պաշտպանության մեխանիզմների շարունակական բարելավումը:

Երրորդ՝ **«Դպրոցի պատրաստվածությունը համընդհանուր ներառականության իրականացմանը»** ենթագլխում ատենախոսը ներկայացնում է դպրոցի կողմից իրականացվող սահմանափակ հնարավորություններ ունեցող երեխաների հետ աշխատանքը, դրա բովանդակությունը, հիմնական քայլերը դպրոցի պատրաստվածության վիճակի ռեալ գնահատման գործիքակազմը, վերլուծում է տարբեր միջոցառումների համար նախատեսված ծրագրերը:

Ատենախոսության երկրորդ՝ **«Դպրոց-ընտանիք համագործակցության համակարգը»** գլուխը կազմված է երեք ենթագլխից:

Առաջին՝ **«Դպրոց-ընտանիք համագործակցության բովանդակությունը»** ենթագլխում ատենախոսը ներկայացնում է երեխայի անձի լիարժեք ձևավորման համար անհրաժեշտ բարենպաստ միկրոկլիման, ուսուցիչ-ծնող, ուսուցիչ-աշակերտ, աշակերտ-աշակերտ փոխհարաբերությունները: Նարե Հովհաննիսյանը փորձ է անում բացահայտել դպրոց-ընտանիք համագործակցության առանձնահատկությունները, հստակեցնելով թե՛ ուսուցիչների, թե՛ ծնողների համապատասխան պարտականությունները և իրավունքները:

Երկրորդ՝ **«Դպրոց-ընտանիք համագործակցության ձևերը և մեթոդները»** ենթագլխում ատենախոսը քննության է առնում դպրոցի և ընտանիքի համագործակցության ձևերն ու մեթոդները:

Ատենախոսը ներկայացնում է դպրոցի և ընտանիքի համագործակցության թե՛ ավանդական, թե՛ այլընտրանքային ձևերն ու մեթոդները:

Խորը վերլուծության են ենթարկվել ատենախոսի կողմից համադպրոցական ծնողական ժողովը, դասարանական ծնողական ժողովը, խորհրդատվություն, անհատական աշխատանքը: Դրա հետ մեկտեղ նոր մեթոդաբանական դիրքերից ներկայացված են նրա կողմից դպրոց-ընտանիք համագործակցության մի շարք նոր ձևեր՝ ծնողական ակումբ, ծնողական դասախոսություն և սեմինար, ծնողական դպրոց, վարպետության դաս, խնդիրների քննարկում և այլն:

Երրորդ՝ **«Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների կրթության կազմակերպման առանձնահատկությունները»** ենթագլխում ատենախոսը ներկայացնում է արդյունավետ մանկավարժական ներգործության մի շարք հնարներ, որոնք նպաստում են երեխաների բարոյական արժեքների ձևավորելուն, բարելավում են նրանց ստեղծագործական միջավայրը, դրական փոփոխություններ են առաջ բերում նրանց վարքագծում:

Ատենախոսության երրորդ՝ **«Դպրոց-ընտանիք համագործակցության իրականացման ուղղությամբ հետազոտական աշխատանք»** գլուխը ներառում է կատարված հետազոտական աշխատանքը և կազմված է չորս ենթագլխից:

Առաջին՝ **«Դպրոց-ընտանիք համագործակցության վերաբերյալ ախտորոշիչ աշխատանքների վերլուծություն»** ենթագլխում ատենախոսը ներկայացված է 2022-2023 ուսումնական տարում Վանաձոր քաղաքի թիվ 1, 3, 4, 6, 18, 22, 25 հիմնական դպրոցների ծնողների և մանկավարժների շրջանում կատարված դիտման, հարցումների, ինչպես նաև նույն դպրոցների տնօրենների տեղակալների հետ անցկացված զրույցի արդյունքների վերլուծությունը:

Բավականին մեծ հետաքրքրություն է ներկայացնում ատենախոսի կողմից իրականացված դիտումը, քանի որ նա դիտման ընթացքում կարողանում է բացահայտել այն թերացումները, որոնք բնորոշ են որոշ ուսուցիչների և ծնողների: Փաստորեն նա կարողանում է հիմնավորել այն թեզը, որ ուսուցիչ-ծնող, դպրոց-ընտանիք համագործակցության բարելավման ուղղությամբ պետք է իրականացվեն լուրջ աշխատանքներ: Կարելի է պնդել, որ ատենախոսի կողմից իրականացված սոցիոլոգիական հարցումների արդյունքները հավաստի են:

Հետազոտության նորույթներից է դպրոց-ընտանիք համագործակցության մոդելը, որի բաղադրիչները՝ մեթոդները, ձևերը, հնարները արտացոլում են ժամանակակից մանկավարժության զարգացման միտումները:

Երկրորդ՝ **«Դպրոց-ընտանիք համագործակցությունն ընդհանուր ներառականության համատեքստում» դասընթացը որպես ծնողների մանկավարժական լուսավորության և մանկավարժների կատարելագործման միջոց»** ենթագլխում ատենախոսը ներկայանցում է

իր կողմից մշակած դասընթացը, որը փորձարկվել է Վանաձորի Վ. Համբարձումյանի անվան թիվ 25 հիմնական դպրոցի 3-րդ դասարանների ծնողների և մանկավարժների շրջանում: Ուշադրության է արժանի նաև Նարե Հովհաննիսյանի կողմից մշակած դասընթացի ծրագիրը, որում ներառված թեմաները վերաբերում են ներառական կրթությանը, դպրոցի և ընտանիքի համագործակցությանը, երեխաների զարգացման առանձնահատկություններին:

Երրորդ՝ **««Դպրոց-ընտանիք համագործակցությունն ընդհանուր ներառականության համատեքստում» հատուկ դասընթացը որպես ուսանողների մասնագիտական կայացման միջոց»** ենթագլխում ատենախոսը քննության է առնում Հասարակական գիտությունների ֆակուլտետի «Սոցիալական մանկավարժություն» մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողների շրջանում անցկացված դասընթացը: Բոլոր թեմաների ընտրությունը հիմնավորված է, բավականին համապարփակ է ներկայացված ներառական կրթության պատմությունը, նրա զարգացման առանձնահատկությունները:

Չորրորդ՝ **«Դասընթացների փորձարկման արդյունքների վերլուծություն»** ենթագլխում ատենախոսը ներկայացնում է 2024թ.-ին դասընթացի ավարտից հետո Վանաձորի թիվ 25 հիմնական դպրոցի և Վանաձորի թիվ 1, 3, 4, 6, 18, 22 հիմնական դպրոցների ծնողների, մանկավարժների շրջանում իրականացված սոցիոլոգիական հարցումների արդյունքների համեմատական վերլուծությունը: **Նրան հաջողվում է ցույց տալ նշված վերլուծության արդյունքում** մանկավարժների և ծնողների միջև համագործակցության բարելավման միտումները, ընդհանուր դինամիկան: Կարծում եմ իրականացված է բավականին օգտակար աշխատանք, որի հիմնական խնդիրները լուծված են: Պաշտպանության ներկայացվող դրույթները և եզրակացությունները բխում են հետազոտության առաջադիր խնդիրներից: Աշխատանքը շարադրված է գրագետ հայերենով: Բոլոր գլուխները և ենթագլուխները տրամաբանորեն ճիշտ են կապակցված և բխում են մեկը մյուսից: Հոդվածները և սեղմագիրն արտացոլում են ատենախոսության բովանդակությունը:

Կարծում եմ որոշ նկատառումներ կօգնեն ատենախոսին նորովի քննության առնել որոշ հարցեր:

1. Պաշտպանության ներկայացվող առաջին դրույթը ընդհանրական բնույթ ունի:

2. Որոշ պնդումներ և եզրահանգումներ աքսիոմատիկ բնույթ ունեն: Օրինակ՝ «Դպրոց-ընտանիք համագործակցության գործում կարևոր են նաև այն մեթոդները, որոնք խթան են հանդիսանում այդ համագործակցության համար՝ զրույց, բանավեճ, անկետավորում, խնդիրների քննարկում»:

3. Սեղմագրում պետք է ներկայացնել, թե ինչ է արված: Խոսքը վերաբերում է շարադրման ոճին:

4. Ատենախոսը նշում է, որ «Մեր առջև դրված նպատակին հասնելու ճանապարհին ձևավորվեց դպրոց-ընտանիք համագործակցության մոդել, որում ներառված են մեր կողմից առաջարկվող ձևերը, սկզբունքները և մեթոդները»: Ինձ թվում է, նա պետք է հստակորեն նշի, որ նա ստեղծել է այդ մոդելը: Այն տպավորությունն է ստեղծվում, որ այդ մոդելը «ձևավորվել է» հեղինակից անկախ:

Կարելի է պնդել, որ Նարե Արմենի Հովհաննիսյանի «Դպրոց-ընտանիք համագործակցության իրականացումն ընդհանուր ներառականության պայմաններում» խորագրով թեկնածուական ատենախոսությունն ավարտուն, գիտական հետազոտություն է, ամբողջովին բավարարում է ՀՀ գիտական աստիճանաշնորհման 7-րդ կետի պահանջները, իսկ հեղինակն արժանի է իր կողմից հայցած մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի ԺԳ.00.01 «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ:

Պաշտոնական ընդդիմախոս
մանկավարժական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր Ի.Կ.Կարապետյան

Ի.Կ.Կարապետյանի ստորագրությունը
հաստատում եմ՝ Վ. Բրյուսովի անվան պետական
համալսարանի գիտ.քարտուղար Հ. Փիլավջյան
11.11. 2024թ.